

Երեմիա եպիսկոպոսապետի և Արսլաղէն թագաւորի օգնականու-
թեամբ սկսեց նոցա մանուկների դաստիարակութեան համար ևս
հոգալ իւր Ենովք, Գանան և Յովնաթան աշակերտներին յանձ-
նելով Աշուանից գաստիարակութեան գործը, դարձաւ Հայաստան
Սահակի մօտ, որ պարապած էր թարգմանութեամբ, և այն՝ յառ-
կապէս ասորերէնից. որովհետեւ յունարէն գրքերը նախ որ այր-
ուած էին Մէհրուտան Արծրունուց, և երկրորդ որ պարսիկները
չէին թողում յունարէն ուսանել:

(Կը շարունակուի):

Յ. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԿԵՆՏՐՕՆՆԵՐԸ.

Փ Ա Ր Է Զ.

(Շարունակութիւն Գրութիւն Ը.)

ԳԼՈՒԽ Գ.

Փարիզի տեղագրութիւնը:—Կլիմա:—Բնակիչների բաժանումը թաղերի վերայ:—
Բնակիչների աճելութիւնը պոթման դարու սկզբից:—Տնտեսութիւն եւ Փարիզի
Բիւրժէն (ելեւմտացոյց) :—Բիւրժէն չափազանց աճելութիւնը:—Քաղաքի մուտք եւ
ծախքը:—Քաղաքական տնտեսութեան եւ կառավարութեան առանձին յատկու-
թիւնները:—Լուսաւոր եւ խաւար կողմերը այդ տնտեսութեան:—Չափազանց ծախ-
սերի եւ պարտքերի օրինակները:

Փարէզը Եւրոպայի մայրաքաղաքների կենտրոնից—Լոնդոնից յետոյ
ամենաբազմամարդն է և ամենաընդարձակը, զետեղուած Սենա գետի
երկու եզերքների և նորա երկու կղզիների վերայ (սրբոյն Լուգովիկոսի
և հին քաղաքի Cité), Քաղաքը կալուած ունի ոչ միայն գետի նոյն իսկ
եզերքները, այլ նոյնպէս և այն բազմաթիւ բլրաձև բարձրութիւնները,
որոնք տարածվում են աջ եզերքի հիւսիսային երկայնութեամբ (բարձ-
րութիւնները Բելվիլ, Էոմօն և Մօնմարտր) և Սենայ գետի հարա-
ւային երկայնութեամբ (բարձրութիւնները Մեոգօն և Բէլ—Վիւ):

Փարիզի կլիման գերազանցում է չափաւորութեամբ, և նորա միջին
օդի խառնուածը (температура), ըստ յարաբերութեան նորա աշխար-
հագրական դրութեան, բաւական բարձր է (10, 74), Մեծ տօթեր և
ցրտեր գրեթէ չըկան, թէպէտ Փարէզը չէ կարելի նոցանից կատարելա-
պէս ազատ համարել, Փարիզի կլիմայի գերազանց յատկութիւններից
մէկը է յաճախ, առատ տեղացող անձրևները, որոնք շատ զգալի չեն
Փարիզում, որովհետեւ քաղաքը լաւ սալայատակած է և օրինակելի

շրանցքներ ունի. տարուայ բոլոր օրերի համարեալ թէ $\frac{1}{3}$ —այսինքն 146 օրերը — լինումեն յարատե անձրեային:

Սենա գետը քաղաքը միջից կտրում, բաժանումէ ծուռ գծով Լատինաց Տ տառի նման, երկու անհաւասար կիսի—հիւսիսային մեծ, իսկ հարաւայինը սակաւ ինչ փոքր. Քաղաքի սկզբնական բնականութիւն հաստատելը սկսել է հարաւային կիսից, կղզիներից՝ որոնք զետեղուած են Սենա գետի մէջ, Շատ հետաքրքիր է և մինչև ցայժմ դեռ բացատրած չէ այն օրէնքը, որով Փարիզումը, ինչպէս և մեծ մասը Եւրոպական միւս մայրաքաղաքներում, բնակիչները հաւաքուել են միշտ արեւմտեան մասումը, քան թէ արեւելեան՝ որ ընդհանրապէս բնականութիւն է ունեցել և ծաղկել աւելի ուշ քան քաղաքի արեւմտեան մասը:

Բոլոր քաղաքը, 1840 թուականից շրջապատած է 10 մեթր բարձրութեամբ և $\frac{3}{4}$ մեթր հաստութեամբ պարիսպներով, Այդ պարիսպները՝ իրանց բոլոր տարածութեամբ սահմանակից են մէկ կողմից լայն պատերազմական ճանապարհին (7 մեթր լայնութեամբ), իսկ միւս կողմից հողէ պատնէշին (6 մեթր հաստութեամբ) և լայն խրամին (15 մեթր լայնութեամբ) հանգերձ պատնէշով: Քաղաքի պարիսպներում բացուած են 55 դռներ, երկաթէ ճանապարհի համար 9 անցք և լայն գնացքի համար երկու ճանապարհ՝ որ հեռու տեղից բերուած է և առատութեամբ բաւականութիւն է տալիս Փարիզին, Քաղաքի պարիսպներից դուրս, մերձաւոր բարձրութիւնների վերայ ցիրուցան շինուած են 16 մարտկոցներ (forts): Պրուսացիները հեռանալուց յետոյ, պատերազմական նախարարութիւնից Փարիզի մօտ նոր մարտկոցների գրծեր որոշուեցին, որոնք պէտք է բաղկանային Փարիզից հեռու երկրորդ արտաքին ամրութիւններ կազմող 17 նոր մարտկոցներից: Շնորհիւ այդ նոր՝ կրակի դիժը ամբողջ 160 վերստաչափ հեռացնող մարտկոցների որոնք կատարելապէս վերջացած են, Փարիզը ներկայ ժամանակումս համարվումէ անառիկ, և չի ենթարկուիլ թշնամու նոր յարձակման միջոցին, ոչ միայն պաշարման, այլ մինչև անգամ շրջապատուելու, վասն զի շրջապատելու համար պէտք կը լինի համարալ թէ մէկ միլիօն զօրք:

Փարիզի հաղարուոր փողոցների մէջ, նոր Փարիզում համարումեն 80 մեծամեծ հրապարակներից ոչ պակաս: Նոցանից շատերը զանազանվումեն ընդարձակութեամբ և նշանաւոր են իրանց վերայ կառուցուած յիշատակարաններով, շատերը պատմական անցքերով հռչակուած են, ոչ միայն տեղական, այլ և ընդհանուր եւրոպական նշանակութեամբ: Սենա գետի եզերքները միացած են միմեանց հետ 27 կամուրջներով, նոցանից ոմանք իրանցով ներկայացնումեն դարաւոր արձանական շինուածներ: Կամուրջներից ոմանք շինուել են վերջին յիսուն տարու միջոցին, օրինակ Իենայի, Ալմի. և զարդարուած են չքնաղ դրուագներով և առանձին ձևերով, քանդակուած միւսնոյն ամուր աւաղաքարից՝ որով շինուած է բոլոր Փարէզը:

Փարիզի ահագին ամբողջութիւնը ներկայ ժամանակում կտրատուած է բոլոր տարածութեամբ, լայն, գեղեցիկ, ուղիղ փողոցներով և շքեղ ծառազարդ զբօսարաններով: Այդ զբօսարանները եռապատիկ ահագին կանաչ գօտուով ընդգրկում, պատում են Փարիզին և տալիս են կատարեալ ընդարձակութիւն ծաղկելու այն փողոցային կեանքի, որ կադմուսէ ֆրանսական մայրաքաղաքի առանձնայատկութիւններից մէկը: Գլխաւոր կենտրոնները այդ փողոցային կեանքի, գլխաւոր կէտերը նորա ձգողութիւններն են մեծամեծ վաճառատները (магазинъ), սրճարանները, ճաշարանները, թատրոնները, վաճառականաց ժողովատեղին (биржа), նամակատունը, (почта), դրամանոցները (банкъ) և ճարտարարուեստ ժողովածունները:—այդ բոլորը առաւելապէս զետեղուած են Սենա գետի աջ եզերքում: Փարիզեան հնութիւնների բոլոր մնացորդները, բոլոր նախարարութեանց ապարանքները, դատարանի շէնքը, ոստիկանարանը (префектура), բարձրագոյն ուսումնական հաստատութիւնները, ճեմարանները, Պանթէօն*), և փողերանոցը զետեղուած են ձախ ափումը և Սենայի կղզիների վերայ:

Քաղաքի կարգաւորութեան համաձայն նորա միլիոնաւոր բնակութիւնը բաժանվում է առանձին առանձին ահագին մասերի, տալով իւրաքանչիւր քաղաքի մասին իւր առանձին բնաւորութիւնը և դրոշմը:

Ընդհանրապէս Փարիզի բնակիչները հաւաքուած են այսպէս. Սենա գետի աջ եզերքում, նորա կենտրոնական թաղերում վիտում է և կենտրոնանում Փարիզի գլխաւոր խուռն ազգաբնակութիւնը—բոլոր գործունեայ, առևտրական և արհեստաւոր ժողովուրդը: Այդ թաղերի արևմտեան մասումը, Աստղի կամարի շուրջը կենտրոնանում են նոր բոլոր փողոցները, նոր պարտէզները, նոր ծառազարդ զբօսարանների մասերը, վերջին քսան տարուայ նոր հոյակապ շինութիւնները: Այս է գլխաւոր բնակութեան տեղը փարթամ բուրժուազիայի և բազմահարուստ զրամատէրերի: Փարիզի ազգաբնակութեան այս ամենահարուստ մասը բնակում է վաճառականաց ժողովատեղի և Բուլօնեան անտառի ուղիղ կէս ճանապարհի վերայ: Արևելեան թաղերի մասում Սենա գետի ափին խառնուած են Փարիզի մշակ բնակիչների աւելի ընչաւէտ մասը:

Սենայ գետի ձախ ափի վերայ հանդիպակաց աջ կողմին ազգաբնակութիւնը մեծ մասամբ բաղկանում է այնպիսի ժողովրդից, որը շատ քիչ կապեր և յարաբերութիւններ ուղղակի ունի այժմեան գործունեայ Փարիզի հետ: Այստեղ բնակչաց մեծ մասը՝ ուսումնականներ են, ուսուցիչներ և ուսանողներ, պատկերահասներ, գրավաճառներ, հեղինակներ, տպագրողներ, փորագրողներ և ուրիշ համանման ժողովուրդ:

(*) Պանթէօն յուն. հռչակաւոր մարդկանց թաղման տեղը:

որ աւելի կոչուած է հոգալու մարդու հոգեկան քան թէ նիւթական կարեւորութեանց համար:

Արեւմտեան թաղերի մասումը՝ որոնք ղետեղուած են Սենայի ձախ եկերրի վերայ, գտնվում է հոչակաւոր Սեն — Ժերմենեան արուարձանը, — ուր կենտրոնացած են Փարիզի նախնի մեծութեան մնացորդները, ֆրանսիական ազնուապետութեան վարդապետ, մեծ մասամբ վատթարացած սերունդների հին ամրոցները: Քաղաքի ծայրերում կենում են բնակիչների ամենաաղքատ մասը, որին այս տեղ էլ օր ըստ օրէ նեղուածութիւն է անում և թանգութիւնը տիրում և նա սակաւ առ սակաւ վերաբնակում է Փարիզի ամրոցներից դուրս...

Բոլոր քաղաքը (1 Գունվարի 1860 թ.) 20 առանձին շրջանի է բաժանուած (arrondissements), որոնցից իւրաքանչիւրը կառավարվում է զատ մէրով (mairie) և երկու օգնականներով: Բոլոր այդ մէրերը ստորագրուած են պրեֆեկտին (եպարքոս) Սենա դեպարտամենտի*), որն գլխաւոր կառավարիչն է համարվում ոչ միայն Փարիզի, այլ և բոլոր Սենեան դեպարտամենտի, որի մէջ Փարէզը համարվում է դեպարտամենտական կենտրոն: Սակայն դեպարտամենտը, ի հարկէ, պարտաւորութեանց շրջանի մէջ, որոնք ղրուած են Սենեան եպարքոսի վերայ, կազմում է ամենափոքր մասը նորա հոգսերի: Ըստ թուոյ բնակչաց այս դեպարտամենտը բոլորը 300 կամ 400,000 ով գերազանցում է քաղաքական ազգաբնակչութիւնից:

Ահագին Փարիզի բնակչութիւնը, ներկայ ժամանակում, որ հասնում է համարեա թէ երկու միլիոնի, վաղուց ուշադրութեամբ ուսումնասիրելու համար դարձել է ստատիստիքական և տնտեսական առարկայ: Ահա ինչու համար մենք կարծում ենք մեր ընթերցողների համար անօգուտ չի լինիլ ծանօթանալ սկիզբը Փարիզի ընդհանուր ազգաբնակչութեան այդ դիտողութիւնների հետ. որովհետեւ ուրիշ կերպով դժուար կը լինի բացատրել զանազան կողմերը այն ահագին բիւզժետի, որը անհրաժեշտ է համարվում գոյութեան համար և պահպանելու այսպիսի ահագին կենտրոն, ինչպէս Փարիզն է:

Փարիզի և նորա բիւրժետի պատմութեան մէջ շատ վսեմ կողմը պէտք է, ի հարկէ, համարել Փարիզի նշանաւոր քանակութեամբ արագապէս աճելութիւնը վերջին 90 տարուայ ընթացքում — մինչև այն աստիճանի արագ, որ միայն ֆրանսիացիների եռանդալից ոգեւորութեամբ և հաստատութեամբ կարելի է եղել գտնել միջոցներ բարեկար-

(*) Դեպարտամենտ է բառ ֆրանս. է մասն ֆրանսիական տէրութեան, որ յանձնվում է առանձին կառավարութեան, իսկ Ռուսաստանում՝ նախարարութեանց եւ ուրիշ հաստատութեանց՝ որ կառավարում է մէկ կամ քանի մի իւր տեսչութեան յանձնուած տնտրականեր, Ռուսաստանի դեպարտամենտները թագաւորական խորհրդարանի, Սենատի, Հախարարութեանց եւ գլխաւոր կառավարութեանց կազմում են բնական մէջն են մասնւած:

գելու համար այնպիսի կենտրոն՝ ինչպէս Փարեզն է և պնքան ամուր, յուսալի և ճիշդ միջոցներ, որ նոցա չըկարողացան դղրգել ոչ յեղափոխական բորբոքները, ոչ կառավարութեանց փոփոխութիւնները, ոչ մինչև անգամ այնպիսի կարի ծանր փորձը, ինչպէս Փարիզի պաշարումն էր և նորա ետեից եկող Ամմունի գործողութիւնները:

Եթէ մենք ստատիստիքական հանգամանքները անցեալ դարու ընդունենք ի կշռագատութիւն, այն ժամանակ կըտեսնենք, որ Փարիզի բնակիչների թիւը 1700 թուականին հասնումէր 720,000 հոգու, 1762 թ. զանազան անբարեյաջող ազգեցութեանց պատճառաւ պակասեց մինչև 600,000, իսկ 1784 թ. դարձեալ հասաւ 720,000 հոգու: Առաջին յեղափոխութեան և առաջին հասարակապետութեան պատերազմի արհաւիրքը կորստական կերպով ազգումեն բնակիչների աճելութեան վերայ, և աշխարհագրութիւնը 1801 թ. համարումէ միայն 546,856 մարդ:

Ատարեալ արժանահաւատ տեղեկութիւններ Փարիզի ազգաբնակչութեան վերայ, որ տալիս է մեզ աշխարհագրութիւնը 1817 թ. որ հաշվումէ 713,966 մարդ, և նորա հետ միասին որոշումէ ժամանակի շրջան, որից սկսած ազգաբնակչութեան աճելութիւնը յառաջ է ընթանում առանց դադար առնելու, երբեմն միայն և այն ոչ երկար միջոց յետաձգվումէ, ժամանակաւորապէս քաղաքական անկարգութիւններով կամ շատ ծանր ազգային թշուառութեանց անցքերով, ինչպէս 1870 և 1871 թ.

Առանձնապէս արագութեամբ աճումէ Փարիզի ազգաբնակչութիւնը, սկսեալ 1852 թ. երբ ձեռնարկութիւն արին չափազանց մեծ գործերի, Փարիզի վերաշինութեան համար և այնքան մեծ և շատ գործ կատարուեց վերանորոգելու այդ հին քաղաքը և դարձնելու նորան կեանքի համար ամենայարմարաւոր և Եւրոպայի կենտրոններից մէկը: Այս աճելութիւնը, սակայն, բոլորովին պէտք չէ վերագրել բնակչաց ներքին աճելութեանը, ծնուածների սաստիկ առաւելութեան պատճառաւ մեծնողներից. — աճելութիւնը, այս հանգամանքում, ինչպէս և ընդհանրապէս Եւրոպայի ամէն մայրաքաղաքների մէջ ծագել է զուտ արտաքին պատճառներից, և գլխաւորապէս գաղթական նոր ժողովրդի աւելորդութիւնից (առաւելապէս մշակ դասի), որոնք այստեղ խմբուել են քաղաքի վերաշինութեամբ նոր սկզբանց վերայ, և օտարերկրացիների յաւելումածից, որ խուռն բաղմութեամբ եկել ժողովուել է նորոգուած Փարիզի մէջ:

Եթէ համեմատենք աշխարհագրութիւնը 1801 թ. (546,856 բնակիչների), 1856 թ. աշխարհագրութեան հետ (1,174,346 բնակիչ), այն ժամանակ կըտեսնենք, որ 56 տարուայ ընթացքում Փարիզի ազգաբնակչութիւնը աճել է 627,490 բն. այսինքն միջին թուով 113 տոկոս:

Ճիշդ վերահասութիւնները Փարիզեան ազգաբնակչութեան, որոնք շատ զգուշաւոր կերպով են կատարուած 1817 և 1871 թուականների

միջոցին՝ տալիս են մեզ հետաքրքիր փաստեր երկու սեուերի վերաբերում թեամբ։

Փարիզեան ազգաբնակչութեան մէջ վերաբերութեամբ դէպի ընտանեկան դրութիւնը, երեւում է որ ամուրի այր մարդիկ աւելի են քան թէ չամուսնացած կանայք և միւս կողմից — այրի այր մարդիկ շատ են, քան թէ այրի կանայք։

Փարիզի ազգաբնակչութեան մասին ըստ հասակաց գտնումներ հետեւեալ հանգամանքը։ Սկսելով 1817 թուականից երկու սեռի քանակութիւնը 50 տարեկանից վեր հեռահեռէ պակասում է։ Ախճակագրող — ֆրանսիացիները աշխատում են բացատրել այդ փաստը, թէ ինչպէս անհամեմատ շատ են թուով երիտասարդ մարդիկ։ Այս երեւոյթները ևս առաւել ցոլանում են բնակիչների, այր մարդկանց կիսի վերայ, քան թէ կանանց, որովհետեւ ընդհանրապէս ջահէլ մարդիկ աւելի մոտ են գործել (գաղթել են ի Փարէզ)։ քան թէ ջահէլ կանայք։

Սեուերի թուական համեմատութիւնը բերում է մեզ հետեւեալ հետաքրքիր եզրակացութեան։ 1817—1836 թ. ժամանակամիջոցում թուարկութեան առաւելութիւնը երեւում է կանացի սեռի կողմը բոլոր բնակիչների դասի մէջ, իսկ վիճակագրութիւնը (СТАТИСТИКА) կանանց այս գերակշռութիւնը բացատրում է նապոլէօնեան պատերազմներով, որոնք պատճառ եղան Փարիզի ազգաբնակչութեան այր մարդկանց նուազելուն։

Առաւելութիւնը 1836 թուականից երեւում է բնակիչների այր մարդկանց կողմը, առանձնապէս 15 և 40 տարեկան հասակի մէջ։ Նոյն իսկ գերազանցութիւնը 1851 թ. յետոյ բարձրանում է աւելի մինչև 40—60 տարեկան հասակը, և միայն 60 տարեկանից բարձր կին բնակիչների թիւը իշխում է այր մարդկանց թուի վերայ։ Գերազանցութիւնը այր բնակիչների թուի այս ժամանակի շրջանի համար բացատրվում է Փարէզ դիմող մշակ դասի սաստիկ հոսանքով և չափից դուրս արուեստների զարգացումով, որ վերակոչել է ի գոյութիւն շատ նոր գործարաններ։

Ըստ ազգութեանց, Փարիզի բնակչութիւնը նոյնպէս ներկայացնում է իրանով բաւական հետաքրքիր երեւոյթ։ Համարեա թէ $\frac{1}{12}$ մասը բոլոր Փարիզի բնակիչների կազմում են օտարերկրացիները, որոնք միշտ հաշվում են Փարիզի մէջ ոչ պակաս քան 105,000 մարդիկ, չըհամարելով քանի հազար օտարերկրացիները, որոնք ընդունել են Ֆրանսիական հպատակութիւն, հետաքրքիր է, որ $\frac{1}{3}$ բոլոր այդ խումուն բաղմութեան օտարերկրացւոց են ֆրանսիացիների բարեկամ Գերմանացիներ։

Փարիզի բնակչաց խտութիւնը շատ մեծ է։ Հին փարիզումը քառակուսի հեկտարի *) վերայ բնակում էր 341 մարդուց ոչ պակաս։ Նոր Փա-

(*) Հեկտար. Յուն. Ֆրանսիական հողային չափ է. համարեա թէ հաւասար ուռւաց դեքտատինի (արտաչափ), ուէթ լարչափ տեղին։

րիզի մէջ, որ պարունակումէ երկու անգամ մեծ հրապարակ, հինգ հակառակ, քառակուսի հեկտարի վերայ բնակումէ 214 մարդ:

Փարիզի բնակիչների մահուան և ծնելոց թուերի մէջ նկատվումէ այժմեան հարիւրամեակում փոքր ինչ բարւոքումն: ԺԸ. դարու բոլոր ընթացքում իւրաքանչիւր տարուայ ծնելոց և մեռելոց թիւը համարեա թէ հաւասար էր: գերազանցութիւնը աւելի մահուան կողմը էր երևում, նա և այն ժամանակ, երբ այս գերազանցութիւնը ոչ մի ժամանակաւոր բարեպատեհ հանգամանքներով չէր լծորդուած:

Այժմեան դարու սկզբից ծնելոց առաւելութիւնը մեռածներից երեւումէ արդէն ինչպէս մի ինչ մշտական, որ խանգարվումէ միայն այնպիսի ժամանակաւոր ազդեցութիւններով, ինչպէս է տարափոխիկ հիւանդութիւնները (эпидемии), պատերազմները, կարգից դուրս թանգութիւնը ուտելիքների (Փարիզի պաշարման միջոցին), կամ ստիպողական խուռն բազմութեան մէկ ժամանակուայ մէջ եղած դաղթականութիւնը, — բայց այնուամենայնիւ ծնելոց թիւը բաւական անմխիթարական է. չընայելով՝ որ քանակութիւնը պսակուողների Փարիզի բնակիչների մէջ, համեմատաբար անցեալ դարու հետ, աճել է համարեա թէ երեք անգամ, ծնելոց քանակութիւնը երևումէ հազիւ երկու անգամ աւելի անցեալ դարու ծնելոց քանակութիւնից: Պարզ է, որ նոյն իսկ այն անձանց յարաբերութեանց մէջ, որոնք մտնում են յամուսնութիւն, կան փոքր ինչ անկանոն պայմաններ, արգելք եղող պողաբերութեան բնակչաց միջին աճելութեան, սակայն և ընտանեկան յարաբերութիւնների մէջ նկատուածնք Փարիզի բնակիչների մէջ վերջին քսան տարուայ համար բարւոքումն ինչ: Աւիճակագրական հանգամանքներում արտայայտվումէ այդ բարւոքումն հետեւալ փաստերով, 1) Պսակաւոր ամուսնութիւնից ծնելոց քանակութիւնը աժմեան դարու վերջին կիսից սկսեց իշխել անպսակ ծնունդների վերայ. 2) Անպսակ ծնունդները այս դարու առաջին կիսում կիսով աւելի չափ եղել են հիւանդանոցներում. վերջին 20 տարին համարեա թէ $\frac{1}{3}$ այդ արտաքոյ կարգի պսակի ծնունդների եղել են տանը (à domicile), ուրեմն ինչ ինչ ընտանեկան պայմանների մէջ են պատահել:

Մենք խօսում ենք Փարիզի բնակիչների աճելութեան մասին, դորա եղրակացութեան համար, նկատում ենք, որ նորա առանձնայատկութիւնը երևումէ տիրապետութեան արական ծնունդների իգական ծննդոց վերայ:

Այս փաստը առանձնապէս շահաւետ է ըստ համեմատութեան ուրիշ նորան համապատասխան վիճակագրական (статистический) փաստերի հետ, երևումէ, որ այր մարդիկ մեռնում են Փարիզումը շատ աւելի քան կանայք: Մանաւանդ շատ են մեռնում այր մարդիկ զանազան ձախորդ գէպքերից (երեք անգամ աւելի քան կանայք):

Աւերին աստիճանի անհաճոյ է և զգալի բնակիչների աճելութեան համար այն փաստը, որ Փարիզումը երկխանների մահը, ևս առաւել փոքր

հասակում,—չափազանց մեծ է: Երեխաների մահը 1-ից մինչև 5 տարեկան հասակը կազմում է 27%: Ընդհանուր երեխաների մահի: Մ. Բլոկ այս դեպքում դարձնում է ուշադրութիւնը այն վերին աստիճանի կրթական փաստի վերայ, որ հարուստ թաղերում երեխաների մահը բնաւ սակաւ է լինում աղքատ թաղերի մահից: Նա գեղեցիկ կերպով բացատրում է այդ նորանով, որ եթէ կեանքի պայմանները ցոյց են տալիս փոքր ինչ բարեկալ ու ազդեցութիւն երեխաների կեանքը պահպանելու համար, միւս կողմից և երեխաների միտուածութիւնը (закаленность) և նոցա սովորութիւնը տանելու վատ պայմանները կեանքի նոյնպէս խաղում է, նոցա կեանքը պահպանելու համար, ոչ չնչին դեր:

Պատճառների յարաբերութեամբ, որոնք մահ են յառաջ բերում, ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ Փարիզում համարեալ թէ մահուան դեպքերի եղած 1/3, ծագում է շնչառական գործարանների հիւանդութեան պատճառաւ: այս հիւանդութիւնների ետեւից գալիս են մարսողութեան գործարանների հիւանդութիւնները, (համարեալ թէ 1/3, մահուան դեպքերի) և ուղեղային և ջղային հիւանդութիւնները: Մահուան դեպքերի մէջ սաստիկ զգալի է մշտական աճելութիւնը անձնասպանութիւնների՝ — 1817 թ. մինչև 1865 թ. քանակութիւնը անձնասպանութեան աճել է համարեալ թէ երեք անգամ նախորդ ժամանակի շրջանից աւելի:

Ծանօթացնելով մեզ Փարիզի բնակիչների մշտական աճելութեան և նորա կեանքի զանազան երեւոյթների հետ, վիճակագրական (статистический) հանգամանքները մի և նոյն ժամանակ ծանօթացնում են մեզ և տների թուի աճելութեան և իւրաքանչիւր տան մէջ եղած բնակիչների թուի հետ:

Այժմեան դարու սկզբում (1804 թ.) Փարիզի մէջ հաշվում էին 25,086 տան 548,000 բնակիչների համար, ուստի միջին թուով իւրաքանչիւր տան վերայ ընկնում էր 21 մարդ:

Չնայելով որ տների քանակութիւնը Փարիզի մէջ աճելի է տարեցտարի, բայց այս աճելութիւնը այնպէս շատ հեռու չի գնացել, ինչպէս բնակիչների աճելութիւնը: այսպէս օրինակ, թէպէտ և 1827 թուականին մենք տեսնում ենք Փարիզի մէջ 29,672 տներ, սակայն իւրաքանչիւր տան բնակիչների թիւը աճում է մինչև 30 մարդուց աւելի: Փարիզի մէջ 1851 թուին հաշվում են 30,222 տուն, իսկ նոցա մէջ 385,191 աւանձին տնւոր, ուրեմն 12 ից աւելի տնւոր իւրաքանչիւր տան և 35-ից աւելի բնակիչ ամէն մէկ տան:

Այսպիսի յարաբերութեան անհաւասարութիւնը բնակիչների թուի աճելու մէջ և Փարիզում տների թուի աճելութեան հետ կարելի է միայն բացատրել նորանով, որ եթէ տները չեն աւելացել քանակութեամբ, դորա փոխարէն աճել են բարձրութեամբ, շինուելով յարկը յարկի վերայ:

Փարիզում 1852 թ. սկսվումէ հին քաղաքի քանդիլը, լծորդուած նոր շինութեանց սաստիկ ոգեւորութեամբ. ուստի նոր տներ շինուցին մի առանձին ջերմաջերմ եռանդով: Փարիզի մէջ 1811 թ. արդէն երևումէ 57,686 տուն (չըհաշուելով շինութիւններն ծառայից, խոհանոցի գոմանոցի համար ելն.) և այս տներում 612,500 առանձին բնակարաններ, որոնց մէջ 481,500 բնակարանները փոքր էին չափով, գնով էլ չէին աւելի 400-կան ֆրանկից: Տների թիւը Փարիզում 1870 թ. հասնումէ մինչև 73,624. ուրեմն 16 տարուայ ընթացքում (1854 մինչև 1870 թ.) Փարիզումը շինուեցին $22\frac{1}{2}$ հազար տներ, որոնց մէջ կարելի էր արձակ կերպով և յարմարութեամբ տեղաւորուել և սորա հետ միասին շատ խիստ ուշադրութիւն դարձրին նոցա առողջապահական և մաքուր պայմանների վերայ (санитарный):

(Շարունակելի)

(Թարգմ.) Զ. Տէր Զաքարեանց:

ԲՈՆԻ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ

ԸՆԴ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀՈՌՈՄԱՅ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ.

Ի Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 1884

(Շարունակելի Արար. Լ. Ը.):

Եղուխաների գլխաւորը ուրիշների հետ Նիկոլին տանումէ Լատին արքեպիսկոպոսի մօտ՝ որ պատգամաւոր ուղարկեց քաղաքի իշխանին Նիկոլի առաջ Հայոց եկեղեցիների դռները բանալ կարգադրելու համար. ստկայն երբ հայերը կամովին չըկամեցան եկեղեցու դուռը բանալ՝ մի օր ժողովուեցին շատ եղուիթներ և գնալով քաղաքի իշխանի և դատաւորների մօտ՝ նոցանից զօրականներ և մարդիկ վերառան և եկան Հայոց եկեղեցու դուռը. առաջարկեցին եկեղեցու դռները բանալ, և երբ Հայերը հրաժարուեցին, այն ժամանակ եկեղեցու դռները ջարդեցին և Նիկոլին մոցրին եկեղեցի և եկեղեցին իւր գոյքերով ու հարքստութեամբ յանձնեցին նորան: Եւ ոչ այս չափ միայն՝ այլև հետամուտ եղան Հայոց մեծամեծներին և իշխաններին բանտարկել: Առաքել վարդապետ այսպէս է նկարագրում Ելվովի Հայոց Մայր եկեղեցու գոյքը. — « Եւ ի մէջ եկեղեցւոյն կայր գանձատուն, և ի նմա գիրք և անօթք յոյժ բազումք, գրեանք աւելի քան զհազար փերթ, ամենեքեան ընտիրք և պատուականք և